

**ՀՀ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ ՎԱՆՈՅԻ**

**Բալկանյան պատերազմները (1912 – 1913 թթ.) և  
Ռուսաստանի դիրքորոշումը**

**Է.00.02 «Համաշխարհային պատմություն»  
մասնագիտությամբ պատմական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2013**

Ատենախոսությունը թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան  
հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆ.՝ Ավանեսյան Վ. Ս.

Պաշտոնական ընդհանխոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր՝  
Խուդինյան Գ.Ս.

պատմական գիտությունների թեկնածու՝  
Մարտիրոսյան Մ.Ե.

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. մայիսի 8-ին, ժ. 15:00-ին ՀՀ  
ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006  
«Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում  
(հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ  
արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. ապրիլի 4-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար, պ.գ.թ.

Ղազարյան Ռ. Պ.

## Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

**Թեմայի արդիականությունը:** XX դարասկզբի միջազգային իրադարձությունների համատեքստում և ժամանակակիցների ներկայացումներում Բալկանները միշտ ընդունվում էին որպես բացասաբար երանգավորված աշխարհաքաղաքական տարածաշրջան: Արդեն իսկ “Բալկաններ” անունը հաճախ ուղեկցվում է տարածաշրջանի այնպիսի բնութագրերով, ինչպիսիք են Եվրոպայի “վառողային մառան” և “խոցելի փորատակ”: Նմանատիպ բացասական երանգավորումը բնորոշ է նաև XX դարում լայն տարածում գտած “բալկանացում” հասկացությանը: Հանրաձայն վերլուծաբան և հրապարակախոս Ռանկո Պետկովիչի գնահատմամբ բալկանացումը բալկանյան պետությունների միջև տարածքային վեճերի պատճառով ընթացող անընդհատ հակամարտությունը վիճակ է, ինչպես նաև բալկանյան տարածաշրջանի անընդմեջ ատոմականացում:<sup>1</sup> Դրան կարելի է ավելացնել նաև եվրոպական տեղությունների բազմամյա շահանդուլական “խաղի” գործոնը: Բալկանաչափ ծանր և դեռևս չհաղթահարվող ձգնաժամը, չնայած նրան, որ նախկին հարավսլավական հանրապետությունների անկախությունը պաշտոնապես ճանաչվել էր, և Մակեդոնիայում ընթացող զինված դիմադրությունը՝ Բալկաններում հակամարտությունների աղբյուրների առանձին արտահայտումներն են: Ռազմավարական կարևոր և խիտ բնակեցված բալկանյան տարածաշրջանի ժամանակակից բարդ խնդիրներից շատերը կրում են օբյեկտիվ բնույթ: XIX դարի վերջից այս տարածաշրջանն առանձնանում է նախ և առաջ իր երկարատև և բնորոշ հակամարտություններով: Դրանք ոչ միայն պարբերաբար կրկնվում էին, այլև նախորդեցին Առաջին համաշխարհային պատերազմին: Նման իրավիճակը շատ դեպքերում որոշվում էր երեք գլխավոր դավանանքների՝ ուղղափառի, կաթոլիկի և իսլամի, առնչությամբ, ինչը բազմիցս վերափոխվում էր սուր կրոնային հակամարտությունների: Բարդացման մյուս բաղադրիչը Բալկաններում էթնիկ բազմազանությունն էր, որը ոչ միայն գաղթի, այլև օսմանյան իշխանությունների անմիջական քաղաքականության հետևանք էր, որն էլ բարձրացնում էր հակամարտության աստիճանը: Բալկանյան ժողովուրդները ձևավորվել են իրար հակասող մշակութաքաղաքական ազդեցությունների պայմաններում. դարերի ընթացքում նրանք գտնվում էին օսմանյան և ավստրո-հունգարական կայսրությունների իշխանության ներքո, բացի դրանից իրենց վրա զգացել են Ռուսական կայսրության ազդեցությունը: Վերջապես, XX դարում Բալկանյան թերակղզու տարածքում տեղի ունեցավ մասշտաբային քաղաքական

<sup>1</sup>Petkovic R. Effekts of the Yugoslav Crisis upon the Balkan Situation. CCS Survey. Belgrade, 1996.p. 3.

գաղափարախոսությունների՝ կոմունիզմի, ֆաշիզմի և ազգայնականության բախում, ինչն ավելի ուժեղացրեց տարածաշրջանի հակամարտային ներուժը:<sup>2</sup>

Այսպիսով, երկար ժամանակահատվածի ընթացքում Բալկանյան թերակղզին մնում էր այն կարևոր տարածաշրջաններից մեկը, որտեղ խտացվել էր միջազգային քաղաքականության հիմնական ուղղությունների լայն տարապատկերը՝ տնտեսությունը, մշակույթը, ռազմաքաղաքական և ազգային շահերը: Բալկանյան երկրները անընդհատ ուշադրության առարկա դարձան ոչ միայն Եվրոպական տերությունների, այլև Մերձավոր Արևելքի, նախ և առաջ Թուրքիայի, ինչպես նաև ԱՄՆ-ի համար:

Ներկայումս Բալկաններում խաղարկվող աշխարհաքաղաքական քարտեզը անմիջականորեն դիպչում է Ռուսաստանի շահերին: Ակնհայտ է, որ Ռուսաստանի հնարավորությունների սահմանափակման պայմաններում ազդեցություն ունենալ Եվրոպական քաղաքականության ընթացքի վրա, խորացնելով նրա հակադրումը Հյուսիսատլանտյան միությանը, չնայած այն բանին, որ Արևելյան Եվրոպան “հեռացել էր” հարավեվրոպական տնտեսական, քաղաքական և մշակութային տարածք, Ռուսաստանի համար Բալկանները մնում են այն եզակի հնարավորություններից մեկը, որը թույլ կտար նրան վերականգնել իր դերը Եվրոպական տերությունների “համերգում”: Այս հանգամանքը արդիական է նաև մեր օրերում, քանի որ Ռուսաստանի նոր քաղաքական ղեկավարությունն արդեն լուրջ հայտ է ներկայացրել՝ հռչակելով քաղաքական թեզը այն մասին, որ Ռուսաստանը մնում է Եվրոպական հզոր տերություն:

Բալկանյան Եվրոպայի ժամանակակից տնտեսական և քաղաքական գործընթացն արտացոլում է ոչ միայն նոր Եվրոպական կարգի շարժումը և ուղղությունը, այն նաև ի հայտ է բերում նոր միտումներ համաշխարհային քաղաքականությունում, նախ և առաջ ժամանակակից առանձնահատկությունը, որն նշվում է որպես գլոբալացման երևույթ: Բացի այդ, Բալկանների շուրջը ստեղծված ժամանակակից իրավիճակը ի հայտ բերեց մի շարք տերությունների նոր վարքագիծ՝ այսպես կոչված “ազատավայր”, որը դուրս է գալիս միջազգային իրավունքի հաստատված նորմերի սահմաններից և, որը, կարելի է ասել, չի նպաստում միջազգային կայունությանը:

Բնական է, որ միջազգային քաղաքականության նոր երևույթները, որոնք այսպես թե այնպես կապված են բալկանյան տարածաշրջանի երկրների հետ, անբաժան են ողջ պատմական գործընթացից, որի կարևոր տեսանկյուններից մեկն էլ հենց

---

<sup>2</sup>Хантингтон С. П., Столкновение цивилизаций и переустройство мирового порядка (открытки из книги). //Projet Contra. М., 1997.с. 121.

համաշխարհային դիվանագիտության սուբյեկտների պայքարն է Բալկաններում առաջատարության հասնելու համար:

XX դարի սկզբին Բալկաններն իրենից ներկայացնում էին կարևոր ռազմավարական տարածաշրջան, որն համարվում էր “վրդովմունքի գործոն” մեծ տերությունների ռազմաքաղաքական միությունների հետ փոխհարաբերություններում: Եվրոպական տերությունների քաղաքական պայքարի ուժեղացումը և դիվանագիտական ակտիվ գործունեությունը միջև անաչառորեն վեր էր ածում բալկանյան տարածաշրջանի երկրները եվրոպական քաղաքական կյանքի առարկայի: Դա իր հերթին նպաստում էր բալկանյան պետությունների քաղաքական ընտրախավերի մոտ նրանց բացառիկության և եվրոպական քաղաքական կյանքում բարձր աստիճանի արժեքավորության գաղափարի ձևավորմանը:

XX դարի վերջին այդ երևույթը վերածնվեց, սակայն արդեն որակապես այլ մակարդակում և շատ ավելի բարդ իրավիճակներում, քան XX հարյուրամյակի սկզբին էր: Հենց այդ պատճառով էլ կարևորվում է բալկանյան գործընթացների առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Չնայած բալկանյան հակամարտությունների անընդհատ կրկնությանը, դրանց բնույթը մինչև վերջ պարզված չէ և գոյություն ունեցող գիտական պատկերացումների հիման վրա փոքր-ինչ հնարավորություն անգամ չկա դուրս գալու դրանց կանխատեսման լիարժեք մակարդակի վրա:<sup>3</sup>

Հետազոտության **նպատակը** կայանում է նրանում, որ XX դարի սկզբին Բալկանյան թերակղզու երկրներում քաղաքական գործընթացներ բովանդակությունը, ընթացքի և հետևանքների, ինչպես նաև Ռուսաստանի ազգային շահերի հետ նրանց հարաբերակցության աստիճանի և բնույթի հայտնաբերման միջոցով բացահայտել բալկանյան իրադարձությունների ազդեցության մակարդակը Պետերբուրգի արտաքին քաղաքական ուղղության ստեղծման և իրականացման գործընթացների վրա ինչպես բալկանյան երկրների, այնպես էլ եվրոպական կաբինետների նկատմամբ:

Հիմնական նպատակից առաջանում են հետևյալ **խնդիրները**՝

✓ վերլուծել Բալկանյան թերակղզու տեղը և դերը եվրոպական միջազգային համակարգում XIX դարի վերջին – XX դարի սկզբին,

✓ գնահատել ռուսական դիվանագիտության արտաքին քաղաքական գործունեության վրա Բոսնիական ձգնաժամի ազդեցության աստիճանը,

---

<sup>3</sup>Тренина Д. Степанова Е. Косово, - нежуднародные аспекты кризиса. Московский Центр Карнеги. М.: Гендальф, 1999. с. 309

✓ հետևել բալկանյան երկրների միջև փոխհարաբերությունների զարգացումը Թուրքիայի հետ նրանց զինված բախման նախաշեմին,

✓ գտնել բալկանյան դաշնակիցների միջավայրում ընթացող շոշափելի տարածայնությունները և գնահատել բալկանյան գործոնի ազդեցության աստիճանը բանակցային գործընթացի ընթացքում պետերբուրգյան կառավարության մարտավարության ընտրության վրա,

✓ հետազոտել Բալկանյան միության փլուզման պատճառները, հետևել թերակղզում նոր ռազմա-քաղաքական ձևավորումների տեսքով նրա ձևափոխումների և ցույց տալ դրանց կախվածությունը Պետերբուրգի արտաքին քաղաքական ուղղությունից,

✓ վերլուծել բալկանյան երկրների “ինքնուրույն” քաղաքականության արդյունքները թերակղզում զինված հիմնախնդրի սրման ընթացքում, գնահատել նրանց ազդեցության աստիճանը միջազգային հարաբերությունների ընթացքի վրա և բնութագրել Ռուսաստանի քաղաքականությունը ստեղծված պայմաններում,

✓ բացահայտել բալկանյան հիմնախնդրին վերաբերվող միջազգային հարաբերությունների եվրոպական գերտերությունների միջև եղած տարածայնությունների խորացման պատճառները և դրանց հետևանքները:

**Հետազոտության գիտական նորույթը:** Առաջադրվում և փաստագրականորեն հաստատվում է Բալկաններում զինված հակամարտությունների փոխկապակցված հաջորդականության առկայության գաղափարը, ինչը մեկ ընդհանուր միջազգային հակամարտության գոյության հաստատումը դարձավ, որն առաջացել էր Բալկանյան թերակղզու փոքր երկրների միջև զինված բախումների ընթացքում: Դրա հետ կապված տվյալ հակամարտության ընդունված բաժանումը Առաջին և Երկրորդ Բալկանյան պատերազմների համարում ենք բավականին պայմանական:

Առաջադրվել և, ինչպես ենթադրում ենք, փաստագրական հաստատվել է եվրոպական քաղաքականության մեջ Ռուսաստանի “վերադարձի” գաղափարը Բալկանյան թերակղզում նրա կողմից ստեղծված “անվտանգության գոտու” միջոցով:

Նախկինում չօգտագործված արխիվային նյութերի միջոցով հաստատվել է Ռուսաստանի դաշնակիցների տատանումը և երբեմն ակնհայտ հակասական դիրք այն հարցերում, որոնք վերաբերվում են Բալկանյան թերակղզում վերջինիս դիրքերի ամրապնդմանը:

**Հետազոտության ժամանակագրական շրջանակներն** ընդգրկում են 1912-1913 թ.թ.: Այդ ժամանակահատվածը ոչ միայն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակագրական

նախերգանքն էր, այլև քաղաքական-տնտեսական ինքնատիպ տարածքի ձևավորման կարևոր փուլ էր եվրոպական մայրցամաքի բալկանյան մասում:

**Մեթոդաբանություն:** Մեթոդոլոգիական պլանում առաջարկվում է հետազոտել մի կողմից որպես «Longe Dure`e»-ի մեծ երկարատևության բացառիկություններից մեկը և համապատասխան զուտ քաղաքական տվյալների հետ միատեղ վերլուծմանն ներգրավել տնտեսական, հասարակագիտական, աշխարհագրական և այլ նյութեր: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է այնպիսի կարևոր հետազոտական մեթոդների օգտագործումը, ինչպիսին են՝ պատմա-համեմատական, համակարգային-գործառնական, դրոնք թույլ են տալիս հետևել բալկանյան ձգնաժամի հասունացման հետ կապված իրադարձությունների պաճառահետևանքային կապերը, դուրս բերել ընդհանուր և առանձնահատուկ գծերը: Վերջապես՝ համապատասխան պատմականության սկզբունքներին, ինչպես քաղաքական, այնպես նաև այլ կարգի բոլոր երևույթները տեղավորված են պատմական ենթատեքստում:

Նյութի շարադրանքը, ատենախոսության կառուցվածքը համապատասխանում են հիմնախնդրային-ժամանակագրական մոտեցմանը:

**Աշխատանքի կիրառական նշանակությունը:** Ատենախոսության արդյունքները և եզրակացությունները նախ կարող են օգտագործվել Ռուսաստանի արտաքին քաղաքականության պատմության, Եվրոպայի և Բալկանյան թերակղզու երկրների միջազգային հարաբերությունների ընդհանրացված հետազոտությունների նկարագրության ժամանակ, “Եվրոպայի և Ամերիկայի երկրների նոր պատմություն” ուսումնական կուրսում, ինչպես նաև ինչպես նաև “Աշխարհաքաղաքականության հիմունքներ” և “Միջազգային հարաբերությունների պատմություն և տեսություն” կուրսերում ընդհանուր պատմական հիմնախնդիրների ուսումնասիրման ժամանակ:

**Աշխատանքի փորձաքննությունը ու պաշտոնական հավաստությունը:** Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները ներկայացվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում:

**Օգտագործված աղբյուրների ու գրականության տեսությունը:** Սկզբնաղբյուրների բազան ներկայացված է արխիվային նյութերով, մամուլում հրատարակված փաստաթղթերով, հրատարակություններով և հուշագրական գրականությամբ:

Ատենախոսության մեջ օգտագործված արխիվային նյութերը ըստ բովանդակության կարելի է պայմանականորեն խմբավորել հետևյալ կերպ:

Առաջին խմբի մեջ են մտել Ռուսական Կայսրության Արտաքին Քաղաքականության Արխիվի (ՌԿԱՔԱ) (АВІРХ) և Ռուսական Պետական Ռազմա-Պատմական Արխիվի (ՌՊՌՊԱ) (РГВИА) ֆոնդերում գտնվող չիրապարակված փաստաթղթերը:

Երկրորդ խումբը ներառում է հրատարակված հրապարակումները:

Հյուպատոսական զեկույցների հավաքածուն հրատարակվում էր մի քանի տասնամյակների ընթացքում՝ սկսած 1898 թ-ից և ներառում է հոդվածներ, որոնք հիմնված են տարբեր տարածաշրջանների ռուսական հյուպատոսների պաշտոնական զեկույցների վրա<sup>4</sup>: Նրանցում նկարագրվում էր երկրների այն ժամանակվա համար ժամանակակից առևտրա-արդյունաբերական վիճակը, բնական հարստությունների բնութագիրը, վերլուծության էր ենթարկվում և կանխատեսումներ էր արվում տարածաշրջանների հետագա զարգացման վերաբերյալ:

Հրապարակված սկզբնաղբյուրների մեջ հատուկ տեղ են զբաղեցնում դիվանագիտական փաստաթղթերի հավաքածուները, որոնք վերաբերվում են 1912 թ. օգոստոսից մինչև 1913 թ. հուլիս ընկած ժամանակահատվածում Բալկանյան թերակղզում տեղի ունեցող իրադարձությունները: Դրանց են պատկանում Գլխավոր շտաբի Գլխավոր Վարչության (ԳՇԳՎ ժողովածու, պրակ 1-62)<sup>5</sup> կողմից հրապարակված նյութերը, ԱԳՆ կողմից հրատարակված դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուները<sup>6</sup>, ինչպես նաև “Միջազգային հարաբերությունները ինպերիալիզմի դարաշրջանում” բազմախատոր պաշտոնական հրատարակությունը<sup>7</sup>:

Ատենախոսական հետազոտության մեջ օգտագործվել են նաև Եվրոպայի պետությունների հետ Ռուսաստանի կառավարության կողմից կնքված պայմանագրերի և համաձայնագրերի հրատարակված

---

<sup>4</sup>Сборник консульских донесений. – СПб.: Тв-во худ. печати, 1898-1907.Россия. Главное Управление Генерального Штаба. Сб-к ГУГШ. Вып. 1-37, 39-41, 43-62. СПб: Военная тип-я, 1909-1914.

<sup>5</sup>Раздел азиатской Турции.По секретным документам бывшего МИД. М., 1925.

<sup>6</sup>Россия .МИД.Сборник дипломатических документов касающихся событий на Балканском полуострове (авг. 1912—июль 1913 гг.).СПб., 1914. 59 с.; Сборник договоров России с другими государствами 1856-1917. М., 1952.

<sup>7</sup>“Международные отношения в эпоху империализма”.М.: Госполитиздат, 1938.;



տեքստերը, ինչպես նաև բալկանյան պետությունների միջև կնքված համաձայնագրերի տեքստերը<sup>8</sup>:

Ատենախոսական աշխատանքում նաև օգտագործվել են Ռուսաստանի արտաքին գործերի նախարարների (Ա.Պ. Իզվոլսկու, Ս.Դ. Սազոնովի), Բուլղարիայի վարչապետ Ի.Ե. Չեշովի, Ֆորին Օֆֆիսի ղեկավար Է. Գրեյի, ինչպես նաև դեսպանների հուշագրությունները<sup>9</sup>, որոնք կազմում են սկզբնաղբյուրների երրորդ խումբը:

Սկզբնաղբյուրների չորրորդ խումբն են ներկայացնում պարբերական մամուլում առկա նյութերը: Հետազոտությունների ժամանակ օգտագործվել են տարբեր պարբերական հրատարակումներ: Դրանց են պատկանում՝ կառավարության «Կառավարական բանբեր» պաշտոնական տարագիր օրգանը, բուրժուա-միապետական «Новоевремя», բուրժուա-ազատական «ВестникЕвропы» ամսագիրը և «Русскоеслово» թերթը, սահմանադրական ժողովրդավանների «Русскаямысль» ամսագիրը և «Речь» թերթը: Մամուլի և դիվանագիտական գերատեսչության փոխհարաբերությունները պարունակում է ՌԿԱՔԱ-ը (АВПРЯ):

Այսպիսով, հետազոտությունում օգտագործված սկզբնաղբյուրային բազան թույլ է տալիս վերարտադրել ոչ միայն քիչ հայտնի, այլև Ռուսաստանի, բալկանյան երկրների արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների պատմության նախկինում անհայտ դրվագները:

Ընդհանուր առմամբ՝ XX դարի սկզբի Ռուսաստանի բալկանյան քաղաքականությունը մասնակի ուսումնասիրվել է ռուսական և բալկանյան երկրների պատմագրությունում: Ռուսական պատմագիտական գրականության առանձնահատկություններից մեկն այն է, որ զինված տարածայնությունը Բալկաններում դիտարկվում է նախ և առաջ համաշխարհային պատերազմին եվրոպական տերությունների նախապատրաստական շրջանակներում, մինչդեռ այն

---

<sup>8</sup>Материалы по истории франко-русских отношений за 1910-1914 гг.Сборник секретных дипломатических документов бывшего императорского российского министерства иностранных дел". М., 1922.; Королев А.Г., Фрейдфельд О.И. Международные отношения 1870-1918 гг. Сборник документов.М.: Академия, 1940.; Сборник дипломатических документов касающихся событий на Балканском полуострове (8.1912 - 7.1913гг.). СПб., 1914. 59 с.

<sup>9</sup>Извольский А.П. Воспоминания. М.-Пг., 1924.; Сазонов С.Д. Воспоминания М.:Международные отношения, 1991.; Пуанкаре Р. Происхождение Мировой войны. М.: Мир, 1924.; Гешов И.Е. Балканский союз. Воспоминания и документы.Пг., 1915.; Grey Ed. 25 years 1892-1916. In 3 vol.- London,1935.; Бьюкенен Д. Мемуары дипломата. М.: Международные отношения, 1991.; Boghitchsewitsch M. Die auswärtige Politik Serbiens 1903-1914. – Berlin, 1928.

որոշ չափով համարվում է միջազգային հարաբերությունների ձգնաժամի ինքնուրույն արտահայտում:

Միջազգային հարաբերությունների ձգնաժամը հնարավորություն ստեղծեց երևան գալու առաջին հետազոտություններին՝ տառաջփորեն “տաք հետքերով”: Սակայն այս հետազոտությունները մեծ մասամբ կրում էին անձնականության, հրապարակախոսական և նկարագրական բնույթ: Նմանատիպ աշխատանքների շարքում կարելի է դասել Ե.Պ. Սեմյոնովի, Գ.Գ. Տելբերգի, Վ.Ի. Շարիյի, Գ. Վերիտասի հետազոտությունները:<sup>10</sup>

Աշխատանքների մեկ այլ խումբ էին կազմում այն հրատարակումները, որոնք նվիրված էին բալկանյան պատերազմների դիվանագիտական նախապատրաստման նկարագրությանը (Վ.Ե. Բելինսկի, Բ.Լ. Եյաշև, Ա.Ի. Բելիշ<sup>11</sup>): Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում բալկանյան երկրների զլխավոր շտաբներում հավատարմագրված հատուկ թղթակիցների՝ Լ.Ղ. Տրոցկու, Վ.Ի. Նեմիրովիչ-Ղանչենկոյի, Վ.Ն. Ֆոն Դրեյերի նոթերը և հոդվածները<sup>12</sup>: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել Պ. Միլյուկովի և Ե.Ա. Ադանովի աշխատանքներին, որտեղ ներկայացված են եղել բալկանյան հարցի համալիր դիտարկման առաջին փորձերը<sup>13</sup>:

Հատուկ խումբ է կազմում արտաքին քաղաքականության հարցերին վերաբերվող տեսական աշխատությունները և բանավեճային հրատարակումները, որոնք վերաբերվում էին արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ Ռուսաստանում և բալկանյան երկրներում կարծիքների փոփոխություններին: Այս առումով ոչ պակաս կարևոր են XX դարի սկզբի այնպիսի հասարակական-քաղաքական գործիչների աշխատանքները, ինչպիսիք են Պ. Միլյուկովը

---

<sup>10</sup>Тельберг Г. Г. Россия и проливы - Томск, 1915; Шарый В. И. Россия и ее конкуренты на Балканском полуострове. Доклады на 1-м Южнорусском торговом-промышленном съезде в Одессе 1910 г. Отчеты съезда. Т. 1. Одесса, 1910; Веритас Г., Семенов Е. П. Предательство Болгарии. Документальная история болгаро-сербской войны 1913 г. и вступления Болгарии в лоно германизма. Пг.: Суворин, 1916.

<sup>11</sup>Белинский В. Е. Современная политика великих держав в ее главных очертаниях. Пг., 1915; Белич А. И. Сербь и болгары в Балканском союзе. СПб: Тип. Т-ва А. С. Суворина “Новое время”, 1913; Эльяшев Б. Л. Англо-германские отношения. К вопросу об экономическом и политическом взаимоотношениях Англии и Германии. Париж, 1915.

<sup>12</sup>Троцкий Л. Д., Кабацкий Х. С. Очерки политической Болгарии: Статьи. М.- Пг.: Госиздат, 1923. 203 с.; Немирович-Данченко Вас. И. С вооруженным народом. Дневник корреспондента в болгарской армии. Т.1-2// Собр.соч. Т. 14-15. СПб, 1913; Дрейер В. Н. Фон На закате империи. М., 1965.

<sup>13</sup>Милюков П. Н. Балканский кризис и политика А. П. Извольского. СПб., 1910. 404 с.; Адамов Е. А. Константинополь и проливы./ Проливы. (Сб-к ст.). М., 1914

և Լ.Ղ. Տրոցկին<sup>14</sup>, որոնց աշխատանքներում, սակայն “առաջին ականատեսների կողմից” նկարագրվել են ոչ միայն Բալկաններում տեղի ունեցող իրադարձությունները, այլ նաև ռուսական հասարակայնության վերաբերմունքը դրանց նկատմամբ:

Հատկապես պետք է նշել այն ավանդը, որը ներդրել է Վ.Ի. Լենինը<sup>15</sup> բալկանյան հիմնախնդրի վերաբերյալ իր նշումներում:

Առանձին խմբի մեջ կարելի է առանձնացնել տարբեր ժողովածուներում<sup>16</sup> զետեղված հրապարակումները, որոնց մեջ հետազոտողները ձգտել են վերլուծության ենթարկել իրադարձությունները և տալ դրանց փորձագիտական գնահատականը:

Ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում բուլղար և սերբ հեղինակներ Ա.Խրիստովի, Ի.Ս.Մինչևի, Խր.Սիլյանովի, Կ.Պոպովի հրապարակումները: Այդ աշխատանքների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանցում միակողմանիորեն դիտարկվում են տեղի ունեցող իրադարձությունները՝ յուրաքանչյուրը հաշվի առնելով իր ազգային պետական շահը<sup>17</sup>:

Դիվանագիտական տարատեսակը ավելի մանրամասն դիտարկվել է այնպիսի հրատարակումներում, ինչպես օրինակ՝ “История дипломатии”, “Восточный вопрос во внешней политике России”, “Дрангах Остен” и народы Центральной, Восточной и Юго-восточной Европы 1871-1918 г.г.”, “История внешней политики России” (конец XIX – начало XX века)<sup>18</sup>:

---

<sup>14</sup>Милюков П. Н. Воспоминания (1859-1917) , М., 1990. 520 с.; Троцкий Л. Д. Сочинения. Сер. П. Перед историческим рубежом. Т. VI Балканы и балканская война. М.-Л.: Госиздат, 1926.

<sup>15</sup>Ленин В. И. Полное собрание сочинений. Т. 22. М., 1980. С. 142-143.; Ленин В. И. ПСС. Т. 23. М, 1980. С. 38-39.; Ленин В. И. ПСС. Т. 17. М., 1980. С. 221-232.

<sup>16</sup>“Проливы” Предисл. Ф. Ротштейна. М., 1923. 101 с; “История нашего времени”. /В кн.: Современная культура и ее проблемы. Т. 3. М., 1913. – 565 с.; Морская сторона балканского вопроса. “Морской Сборник”, 1913., №11.

<sup>17</sup>Христов А. Действията на 4-та П. Пръславска дивизия в освободителната война 1912-1913 г.г. Ч. 1. София, 1915.; Минчев И. М. Сръбские ламтежи за български земли. София, 1917. 35 с.; Силянв Хр. Сръбско-българският спор и Русия. София, 1915.; Поповъ К. Г. Стопанска България. През 1911 г. Статистическата исследования. София, 1916.

<sup>18</sup>История дипломатии. Т. 2. М.: Госполитиздат, 1963.; Восточный вопрос во внешней политике России. Конец XIX – нначало XX вв. М.: Наука, 1978; “Дранг нах Остен” и народы Центральной Восточной и Юговосточной Европы 1871-1918 г.г. М.: Наука, 1977.; История внешней политики России. Конец XIX - начало XX в. М.: Международные отношения, 1999

Առանձին խմբի մեջ պետք է դասել Կ.Բ.Վինոգրադովի, Ն.Ի.Աստաֆևի, Ա.Վ.Իզմաստևի<sup>19</sup> ինքնատիպ, վերլուծական հետազոտությունները:

Բացի տնտեսական գործոնից, ցարական կառավարության դիրքորոշման վրա մեծ ազդեցություն էր գործում հասարակական կարծիքը, որը ներկայացվում էր տարբեր քաղաքական կուսակցություններով և հասարակական շարժումներով: Այդ գործոնի դերի մասին են վկայում Ի.Վ. Բեստուժևի, Ա.Ն. Բոխանովի, Վ.Ս. Դյակինի, Լ.Ե. Շեպելևի, Վ.Ի. Ստարցևի և այլոց<sup>20</sup> աշխատանքները:

Բալկանյան երկրների պատմությանը նվիրված հետազոտությունները նույնպես կարելի է բաժանել՝ առաջին՝ աշխատանքներ, որոնք ընդհանուր առմամբ հետևում էին լենինյան ձևակերպումներին: Երկրորդ, աշխատանքներ Մ.Ն.Պոկրովսկու “ուղղագիծ” գնահատումների ոգով, որոնց էությունը կայանում էր նրանում, որ Ռուսաստանը կոնկրետ ձգտումներ ուներ զավթելու Պոլիսը և նեղուցները<sup>21</sup>: Հետագայում հայտնվեցին Ա.Վ.Կարասևի, Վ.Ի.Կոսիկի, Ա.Գ. Ջադոխինի, Ա.Յու. Նիզովսկու բալկանյան ժողովուրդների ոչ իդեալական պատմության ուսումնասիրմանն ուղղված այլընտրանքային հետազոտությունները, որոնք հնազանդորեն հետևում էին ռուսական արտաքին քաղաքականությանը և բալկանյան ազգայնամոլության իրական արտահայտումներին, ինչը բնորոշ էր թերակղզու, առանց բացառության, բոլոր ազգերին<sup>22</sup>:

Վ.Ն. Վինոգրադովի, Վ.Ի. Ֆրեյդզոնի և Ե.Կ. Վյազենսկայայի աշխատությունները կառուցված են առաջին հերթին բալկանյան ժողովուրդներին բնորոշ ազգային դիմագծերի համալիր ուսումնասիրման, միջազգային ասպարեզում իրենց պետական շահերի

---

<sup>19</sup>Виноградова К. Б. Боснийский кризис в 1908-1909гг.А.: АГУ, 1964.; Астафев Н. И. Русско-германские отношения 1905-1911 гг. М.: Изд-во Московского Университета, 1972.; Игнатъев А. В. Русско-английские отношения накануне первой мировой войны. М., 1962.

<sup>20</sup>Бестужев И. В. Борьба в России по вопросам внешней политики 1906-1910 гг.М.: Изд-во АН СССР, 1961.; Боханов А. Н. Буржуазная пресса России.М.: Наука, 1984.; Дякин В. С. Самодержавие, буржуазия и дворянство в 1907-1911 гг. А.: Наука, 1978.; Шепелев Л. Е. Царизм и буржуазия в 1904-1914 гг. А.: Наука, 1987.; Страцев В. И. Русская буржуазия и самодержавие в 1905-1917 гг. А.: Наука, 1977.

<sup>21</sup>Покровский М. Н. Внешняя политика России в конце XIX в. / В кн.: Дипломатия и войны царской России в XIXв. М., 1923.

<sup>22</sup>Карасев А. В. Сербия и Черногория 1903-1913 гг. Балканские войны /Сб-к ст.: На путях к Югославии: за и против. М.: Индрик, 1997. С. 303-317; Косик В. И. Македония – споры, соглашения, войны. / Сб-к ст.: На путях к Югославии. М.: Индрик, 1997. С. 318-319; Задохин А. Г. , Низовский С. Ю. Пороховой погреб Европы. М.: Вече, 2000.

իրականացման հետ կապված մեծապետական զաղափարների ու հիմնախնդիրների առաջացման և բախման հետազոտության վրա<sup>23</sup>:

Բալկանյան թերակղզու երկրներում գերմանական և ավստրո-հունգարական կապիտալիզմի նվաճողական քաղաքականությանը բավականաչափ մեծ ուշադրություն է հատկացված: Այդ պրոցեսները բավականին մանրամասն ներկայացված են Պ.Վ. Ժոզովի, Ա.Ս. Սիլինի, Վ.Վ. Ջայցի, Մ.Ա. Բիրմանի, Վ.Ա.Ժեբոքրիցկու և Գ.Մ. Տրուխնովի աշխատանքներում<sup>24</sup>:

Ուսումնասիրվող հիմնախնդրի համատեքստում անտարակուսելի և անթաքույց հետաքրքրություն են ներկայացնում Յու.Ա.Պիսարևի, Բ.Ս.Պոպովի<sup>25</sup> և այլոց աշխատանքները:

Յու.Ա.Պիսարևի, Ա.Չակիրի աշխատանքներում անհերքելի արժանիք է համարվում այն, որ հեղինակները բավականին տեղին և ժամանակին արտացոլում են ներքաղաքական պայքարի, սոցիալական և զաղափարախոսական բախումների, ազգամիջյան և կրոնական հակասությունների պատմությունը<sup>26</sup>:

Բալկաններում միջազգային հարաբերությունների սրման հետ կապված հարցի առաջին հետազոտողներից մեկն է անգլիացի

---

<sup>23</sup>Виноградов В. Н. “Вклад” малых стран в развязывание Первой мировой войны. / Первая мировая война : Пролог XX в. М.: Наука 1999.; Фрейдзон В. И. Югославизм и “великие идеи” у хорватов и сербов монархии Габсбургов во второй половине XIXвека. / Сб-к ст.: На путях к Югославии: за и против. М.: Индрик, 1997.; Вяземская Е.К. Пороховой погреб на Балканах – Босния и Герцеговина 1878-1918 гг. /Сб-к ст.: На путях к Югославии; за и против. М.: Индрик, 1997. с. 286-318..

<sup>24</sup>Жогов П.В. Дипломатия Германии и Австро-Венгрии и первая Балканская война 1912-1913 гг.М.: Наука 1969.; Силин А. С. Экспансия германского империализма на Ближнем Востоке накануне первой мировой войны. М.: Наука, 1976.; Заицев В.В. Германская политика на Балканах и позиция Англии в период Лондонской конференции послов великих держав 1912-1913 гг./Германская восточная политика в новое и новейшее время. М.: Наука 1974.; Бирман М. А. Дипломатия Германии и Балканский союз в 1912 г. /Исследования по славяно-германским отношениям. М.: Наука 1971.; Жебокрцкий В.А. Болгария в период Балканских войн 1912-1913 гг. Киев 1961.; Трухнов Г.М. Германская империалистическая политика на Балканах в период первой Балканской войны. М,1948.

<sup>25</sup>Писарев Ю.А. Сербия и Черногория в первой мировой войне.М.: Наука 1968.; Виноградов В.Н. Об исторических корнях “горячих точек” на Балканах. “Новая и новейшая история”, 1993.-№ 4. С. 3-13.; Попов Б. С. Национально-освободительное и рабочее движение в Болгарии и Сербии в 1871-1914 гг. М., 1958.

<sup>26</sup>Писарев Ю.А. Освободительное движение югославских народов Австро-Венгрии.М.: Академия наук 1962.; Чакир А. Роль государств Юго-Восточной Европы в международных отношениях (1908-1913 гг.) / В кн.: Nouvelles etudes Thistoire, Bucuresti, 1980. С. 269-283.

պատմաբան Ջ. Գուչը<sup>27</sup>: Իր աշխատանքում նա փորձեց ապացուցել, որ պատերազմի առաջացումը 1914 թ-ին տեղի ունեցավ ելնելով որոշ պատահական հանգամանքներից, իսկ Գրեյին և գերմանական կանցլեր Տ. ֆոն Բետման-Հոլվեգին ներկայացրեց որպես “մեծ ջենտլմեններ, որոնք անկեղծորեն սիրահարված էին աշխարհին”<sup>28</sup>:

Մյուս անգլիացի պատմաբան Ա.Ջ.Պեյլորը, 1957 թ-ին լույս տեսած “Պայքար Եվրոպայում տիրապետության համար, 1848-1918” գրքում, հիմնականում սահմանափակվում է աշխարհամասի դիվանագիտական պատմության ուսումնասիրմամբ<sup>29</sup>:

Մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել մեկ այլ ամերիկացի հետազոտողի՝ Ի.Հելմրայխի<sup>30</sup> աշխատությունը: Հեղինակը բավականին մանրագնինուշադրություն էր դարձնում 1912-1913 թ.թ. իրադարձություններին՝ ռազմական տեսակետից:

Պատմագրությունում առաջին համաշխարհային պատերազմի պատճառների մեջ անձնական գործոնին առաջնային նշանակություն տվող ուղղության ներկայացուցիչների մեջ կարելի է առանձնացնել ամերիկացի խոշոր պատմաբան Ս.Ֆեյին: Պատերազմի սոցիալական պատճառների վերլուծության փոխարեն հիմնական ուշադրություն է դարձվում այս կամ այն հասարակական գործիչների գործողությունների հոգեբանական հիմնավորման քննարկմանը, որոնց սխալներն, նրա կարծիքով, բերեցին համաշխարհային աղետի: վերլուծության մեջ<sup>31</sup>:

Եվրոպական տերությունների հետ Ռուսաստանի փոխհարաբերությունների առանձին տեսակետների, ինչպես նաև “Եվրոպական համերգի” անդամների միջև մի շարք հարցերի, մասնավորապես, երկաթուղային շինարարության շուրջ հակասությունները իրենց արտացոլումը գտան Ա.Կրեպտոնի, ամերիկյան հետազոտողների, Ինդիանայի համալսարանի պրոֆեսորներ Բ. և Չ.Ելավիչի ամուսինների աշխատություններում<sup>32</sup>:

Ամերիկյան հետազոտող Ջ.Հոֆմանը իր “Ռուս-ավստրիական մրցակցությունը Բալկաններում” աշխատությունում նպատակ էր դրել ներկայացնել Ռուսաստանի ձգտումը ուժեղացնել իր զինվորական ուժը տարածաշրջաններում, նվաճել Պոլիսը և հաստատել իր համար արդյունավետ նեղուցների ռեժիմը<sup>33</sup>:

<sup>27</sup>Gooch G.P. British documents on the origins of the war 1898-1914. London, 1927.

<sup>28</sup>Gooch G.P. Before the War. London, 1938, v. II, p. 284.

<sup>29</sup>Taylor A. The Struggle for Master in Europe.1848-1918.Oxford, 1957.

<sup>30</sup>Helmreich E. Ch. The diplomacy of the Balkan wars 1912-1913. Cambridge; London Harvard university press., 1938. 523 p.

<sup>31</sup>Փեյ Ս. Происхождение мирового войны. Т. 1. М., 1934.

<sup>32</sup>Crampton R.J. The hollow detente: Anglo-German relation in the Balkan 1911-1914. London, 1980 255 p.; Jelavich B., Jelavich Ch. The Establishment of Balkan National States. Seattle, 1978. 358 p.

<sup>33</sup>Hoffmann J.W. The Austro-Russian rivalry in the Balkans 1909-1912. Chicago, 1940.

Արևմտաեվրոպական և ամերիկյան հետազոտողների (հատկապես XX դարի կեսերին պատկանող) բնորոշ գծ լարելի է համարել ռուսական կայսրության մեծատիրական քաղաքականության զուգակցումը Սովետական Միության մեծատիրական ձգտումների հետ:

Ակնհայտ հակառուսական բնույթ է կրում Լոնդոնում զերմանիայի նախկին դեսպան Կ. Լիխնովսկու “Իմ առաքելությունը Լոնդոնում 1912-1914 թ.թ.” աշխատությունը<sup>34</sup>:

Բալկանյան հիմնախնդիրը սերտորեն կապված է “Արևելյան հարցի” ուսումնասիրման հետ, “որի առաջացումը հետևում էր Օսմանյան կայսրության անկման, նրան ենթակա ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի չափերի և կապիտալիզմի զարգացման հետևանքով մղված Մերձավոր Արևելքում եվրոպական տերությունների հակասությունների ուժեղացման հետ”<sup>35</sup>:

Բալկանյան երկրների, լինի դա Սերբիան, Բուլղարիան կամ Հունաստանը, արտաքին քաղաքականության հիմնախնդիրների ուսումնասիրման գործում մեծ ավանդ ներդրեցին սլավոնական մասնագետները, Բեռլինում Սերբիայի նախկին հավատարմատար Մ.Բոգիչևիչին<sup>36</sup>:

Բալկանյան պատերազմների նախաշեմին Սերբիայի քաղաքականության հետազոտության համար հատկապես կարևոր է Ա. Տոչևի “Բալկանյան պատերազմներ” մասամբ հուշագրային աշխատանքը<sup>37</sup>:

Բալկանյան թերակղզում իրավիճակի սրացման պատճառների ուսումնասիրության համար ոչ պակաս կարևոր արժեք է ներկայացնում պատմության տնտեսական հարցերի գծով բուլղարացի մասնագետ Ց. Տոդորովայի աշխատանքը<sup>38</sup>:

Բալկանյան պատերազմների նախաշեմին Բուլղարիայի և Թուրքիայի ուժերի պատրաստվածության մակարդակի, իրականացվող զորահավաքային և արտաքին քաղաքական միջոցառումների բնույթի, ինչպես նաև զինված գործողությունների ընթացքի նկարագրության հետազոտության համար հատկապես արժեքավոր է Վ.Բունյակովսկու “Բալկանյան պատերազմ.բուլղարական I և III բանակների գործողությունները” աշխատանքը<sup>39</sup>:

<sup>34</sup>Lichnovsky K. M. My mission to London 1912-1914, London, 1918.

<sup>35</sup>Восточный вопрос во внешней политике России. (конец XVIII - начало XX в.) М.: Наука, 1978. 434 с. // В. А. Георгиев и др.

<sup>36</sup>Boghitschewitsch M. Die auswärtige Politik Serbiens 1903-1914. Berlin, 1928.

<sup>37</sup>Тошев А. Балканските войни. Т. 2. София, 1931.

<sup>38</sup>Тодорова Цв. Дипломатическа история на външните заеми на България 1888-1912 гг. София, 1971. 497с.

<sup>39</sup>Буняковский В. Балканская война. Действия I и III болгарских армий (Критико-историческое исследование). Пг., 1917.

Բացի բուլղարացի հետազոտողներից, սովյալ հիմնախնդրի վերաբերյալ ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում հարավսլավացի մասնագետների, ինչպես օրինակ, Ա. Պետկովիչի, Դ. Ջոզրաֆսկիի, Մ. Լակովի և այլոց աշխատանքները<sup>40</sup>:

Մեծ տերությունների փոխհարաբերությունների մասին Սերբիայում հետաքրքիր նյութեր են ներկայացված «Велике силе и Србија пред први светски рат» հոդվածների ժողովածուի մեջ<sup>41</sup>:

